

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական լեռնաշխարհը քաղաքակրթության բնօրրաններից է, ուր քարի դարից սկսած հարատևել է մարդը: Հայ ժողովուրդը աշխարհի հնագույն ժողովուրդներից է: Դարերի խորքից եկող նրա պատմությունը հաշվվում է շուրջ 5000 տարի:

Հայ ժողովուրդը դեռ հին ժամանակներից աչքի է ընկել իր նյութական և հոգևոր մշակույթով: Հին աշխարհի առևտրական ու ռազմական կարևորագույն երկու մայրուղիներն անցել են Հայաստանի տարածքով, որոնք Արևելքը կապել են Արևմուտքի հետ՝ մշտապես պատերազմական բեմ դարձնելով այն:

Ն.ք. IX-VI դարերում Հայկական լեռնաշխարհի տարածքում գոյատևել է Ուրարտական (Արարատյան) թագավորությունն՝ իր ինքնատիպ և հնագույն բարձր քաղաքակրթությամբ: Դրավկայությունն են Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանի տարածքում հայտնաբերված Ուրարտուի Արգիշտի թագավորի կողմից հիմնադրված (Ն.ք. 782թ.) Էրեբունի քաղաքի ավերակները: Արարատյան թագավորությունում զարգացած էին բերդ-քաղաքների շինարարությունը, արհեստները, մետաղագործությունը, ոսկերչությունը, քարի և փայտի գեղարվեստական մշակումը և այլ արհեստներ: Չարգացման բարձր մակարդակի էր հասել մշակույթը, ճարտարապետությունը, թատրոնը, գրականությունը և այլն:

Ուրարտուի անկումից հետո, Տիգրան Մեծ թագավորի (Ն.ք. 95-55թթ.) միասնական թագավորության ընթացքում շենացել և հզորացել է Հայաստանը: Կառուցվել են բազմաթիվ քաղաքներ ու գյուղեր:

Քրիստոնեությունը որպես պետական կրոն աշխարհում առաջինն (301թ.) ընդունվել է հայերի կողմից: Հայաստանյաց եկեղեցու կաթողիկոսարանն առ այսօր գտնվում է հենց 301թ. Գրի-գոր Լուսավորչի կողմից հիմնադրված Էջմիածնի Մայր տաճարում: 2001թ. լրանում է Հայաստանում քրիստոնեության պետականորեն ընդունման 1700-ամյակը, որը հայ ժողովուրդը պատ-րաստվում է դիմավորել մեծ շուքով:

1375թ. Կիլիկյան թագավորության անկումը հայոց անկախ պետականության վերջն էր: Ազգային հիշողության մեջ օտար կայսրություններում գոյատևումը մնացել է որպես նսեմացնող զիջումների, նահանջների, ճնշումների դարավոր պատմություն: Բնագրային այդ ընկալումը ժողովրդի մոտ գաղափարախոսական ձևավորում ստացավ 19-րդ դարում:

1827թ. Արևելյան Հայաստանն ազատագրվելով պարսկական լծից, ներառվեց Ռուսական կայսրության մեջ (այս հատվածը փրկվեց ֆիզիկական ոչնչացման սպառնալիքից, թեև ցարական միապետության գաղութատիրական քաղաքականության պայմաններում մնաց որպես Ռուսաստանի հետամնաց ծայրամաս), իսկ Արևմտյան Հայաստանը դեռևս կեղեքվում էր թուրքական բռնապետության ճնշման տակ:

Առաջին համաշխարհային պատերազմը (1914-1918թթ.) խիստ ծանր անդրադարձավ հայ ժողովրդի ճակատագրի վրա: Օգտվելով պատերազմական իրավիճակից՝ 1915թ. Օսմանյան կայսրության իշխանությունները դիմեցին երկրի հայ բնակչության ցեղասպանության, դրա գոհը դարձավ շուրջ 1.5 մլն. հայ, մնացած մասը բռնագաղթվեց: Վերապրողները ցրվեցին տարբեր երկր-ներ: Փաստորեն թուրքական կառավարիչները բռնագաղթի և եղեռնի միջոցով հայաթափեցին ողջ Արևմտյան Հայաստանը:

Ռուսական կայսրության փլուզման արդյունքում հայերը, ի թիվս այլ ազգային փոքրամասնությունների, 1918թ. ստացան պետական անկախության հնարավորություն: Ցեղասպանությունից, պատերազմից, հեղափոխությունից հետո Հայաստանը հայտնվեց քաղաքական դատարկության մեջ, փլուզված տնտեսությամբ, փախստականներով ու գործազուրկներով հանդերձ, առանց դաշնակիցների, առանց մշակված գաղափարախոսության: Այդ Հանրապետությունը գոյատևեց ընդամենը երկու և կես տարի (ազգային ժողովրդավարության արժեքները չդիմացան համայնավարական գաղափարի և Կարմիր բանակի գրոհին): Այնուհանդերձ, 20-րդ դարասկզբում, Հայաստանի Առաջին Հանրապետությունը, իր բոլոր թուլություններով և թերություններով հանդերձ, կատարեց պատմական նախադեպի կարևոր դերը, ստեղծելով ժողովրդավարության և անկախ պետականության համակարգ՝ խորհրդարանից ու համալսարանից մինչև բանկ ու բանակ:

1920թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում հռչակվեցին խորհրդային կարգեր: Այդ վարչակարգը գոյատևեց 70 տարի, որի ընթացքում հայերն իրենց պատմական երկրից մնացած տարածքում ճաշակեցին զարգացման աննախադեպ հնարավորություններ մշակույթի, գիտության, արվեստի և տնտեսության բնագավառներում: 1921-1991թթ. Հայաստանի Երկրորդ Հանրապետությունում կուտակվեց հասարակական ինքնագիտակցության և ինքնակառավարման եզակի փորձ, առանց որի անհնար կլիներ Երրորդ Հանրապետության կայացումը:

ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության պետական անկախության հռչակագիրն ընդունվեց 1991թ. սեպտեմբերի 21-ին, նույն թվականի դեկտեմբերի 21-ին Հայաստանը դարձավ ԱՊՀ անդամ, իսկ 1992թ. մարտի 2-ից՝ ՄԱԿ-ի անդամ:

Պետական լեզուն հայերենն է, որը պատկանում է հնդեվրոպական լեզվախմբին, ազգային արժույթը՝ դրամն է, որը շրջանառության մեջ է դրվել 1993թ. նոյեմբերին:

Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է (ՀՀ Սահմանադրություն, գլուխ 1, հոդված 1):

Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Հանրապետության նախագահը երկրի անակխության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է: Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանությունն իրականացնում է ազգային ժողովը:

Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց միջոցով (ՀՀ Սահմանադրություն, գլուխ 1, հոդված 2):

Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա (ՀՀ Սահմանադրություն, գլուխ 1, հոդված 5):

ՏԱՐԱԾՔԸ

Հայաստանի Հանրապետությունը լեռնային փոքր երկիր է, որի տարածքի շուրջ 90%-ը տեղաբաշխված է ծովի մակերևույթից 1000 մետրից ավելի բարձրության վրա: Երկիրը գտնվում է Ասիայի հարավ-արևմուտքում, գրավում է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան հատվածը՝ Կովկասի և Առաջավոր Ասիայի միջև (Կուր և Արաքս գետերի միջին հոսանքների միջգետային տարածքը): Ընդհանուր տարածքն ընկած է հս.լ 38⁰ 50¹ - 41⁰ 18¹ -ը և ալ.ե. 43⁰ 27¹ - 46⁰ 37¹ -ի միջև: Հյուսիսից և արևելքից սահմանակից է Վրաստանին և Ադրբեջանին, իսկ արևմուտքից և հարավից՝ Թուրքիային և Իրանին: Երկրի տարածքը կազմում է 29743 քառ.կմ, որի 46,8%-ը կազմում են գյուղատնտեսական հողատեսքերը, 34,9%-ը՝ լեռները, բարձրավանդակներն ու այլ հողատեսքերը, 12,7%-ը՝ անտառները և 5,6%-ը՝ ջրային տարածքը:

Երկրի ամենաբարձր կետը Արագած լեռան գագաթն է (4090 մ), ամենախոր իջվածքը՝ Գեբեղ գետի կիրճը (390 մ): Ամենաերկար ձգվածությունը հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք 360 կմ է, իսկ արևմուտքից արևելք՝ 200 կմ:

Հայաստանի տարածքում ամենամեծ լիճը Սևանա լիճն է (մակերեսը 1256 քառ. կմ), ամենաերկար գետը Արաքսն է՝ 158 կմ (ընդհանուր երկարությունը՝ 1072 կմ):

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մայրաքաղաքը՝ ք. ԵՐԵՎԱՆ

Մարզեր՝	11 (ներառյալ Երևան քաղաքը՝ մարզի կարգավիճակով)
Քաղաքային համայնքներ՝	47
Թաղային համայնքներ՝	12
Գյուղական համայնքներ՝	871
Բնակչությունը՝	3798,2 հազ.մարդ (1999թ. հունվարի 1 -ի դրությամբ*)
այդ թվում՝	
քաղաքային՝	2536,0 հազ. մարդ կամ 66.8 %
գյուղական՝	1262.2 հազ. մարդ կամ 33.2 %
Բնակչության 48,6 %-ը տղամարդիկ են, 51,4 %-ը՝ կանայք:	

Հայաստանի Հանրապետության բնակչությունը գրեթե միատարր է (96 տոկոսը հայեր են, 4 տոկոսը՝ եզդիներ, քրդեր, ռուսներ, ուկրաինացիներ, ասորիներ, հույներ և այլ ազգային փոքրամասնություններ):

Հայերն այն ժողովուրդներից են, որոնց զգալի մասը ճակատագրի բերումով ապրում է հայրենիքից դուրս (շուրջ 5 մլն. հայեր այսօր ապրում են 66 երկրներում): Հայկական Սփյուռքի ձևավորումը սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914-1918թթ.), երբ Հայաստանի տարածքը բաժանված էր իրար դեմ պատերազմող կայսրությունների միջև: Օսմանյան կայսրությունը տիրում էր նրա հիմնական և ամենահայաշատ մասին՝ Արևմտյան Հայաստանին, իսկ Ռուսական կայսրությունը՝ Արևելյան Հայաստանին: Հայկական Սփյուռքի տարածքային և քանակական կառուցվածքը պայմանավորված է այս կամ այն երկրում նրա անվտանգության ու կենսագործունեության համար անհրաժեշտ պայմանների առկայությամբ:

* Հանրապետության առկա բնակչության բվաքանակն արտագաղթի թերահաշվառման հետևանքով զգալիորեն պակաս է: Ըստ ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից իրականացվող ուղևորափոխադրումների հաշվառման տվյալների, 1992-98թթ. հանրապետությունից մեկնողների բվաքանակն ավելի քան 600 հազ.մարդով գերազանցել է ժամանողների բվաքանակը:

Հայաստանի Հանրապետությունում ազատական տնտեսակարգի կառուցումը խարսխվել է տնտեսության մեջ մասնավոր հատվածի ձևավորման և դրա գործունեության ու զարգացման համար օրենսդրական դաշտի ստեղծման ուղղությամբ պետական քաղաքականության վարմամբ: Այդ ուղղությամբ իրականացվել է. հողի սեփականաշնորհում (1991թ.), գների փուլային ազատականացում, հարկային և մաքսային քաղաքականության, բանկային նոր համակարգի ձևավորում, արդյունաբերության և ծառայությունների ոլորտների սեփականաշնորհում (ձեռնարկությունների սեփականաշնորհումը սկսվեց 1991-92թթ. «փոքր» օբյեկտների՝ առևտրի, հանրային սննդի և կենցաղսպասարկման ոլորտների փորձնական, իսկ 1995թ. խոշոր արդյունաբերության սեփականաշնորհումով), ազգային արժույթի՝ դրամի ներդրում (1993թ.), արտարժույթային և ֆոնդային շուկաների ձևավորում, բնակչության առավել անապահով խավերի սոցիալական պաշտպանվածության ցանցի ձևավորում և այլն:

Ներկայումս հանրապետությունում ձևավորվել են պայմաններ, որոնք հանգեցրել են տնտեսության մասնավոր հատվածի գերակայությանը (մասնավոր հատվածի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 1990թ. 11.7 %-ի դիմաց 1998թ. կազմել է 74.5%):

1991թ. մինչև 1994թ. հանրապետությունում արձանագրվել է արտադրության անկում: ՀՆԱ-ի ծավալի ամենամեծ անկումը գրանցվել է 1992թ. (42 տոկոսային կետով): Տնտեսության աշխուժացում սկսվել է արձանագրվել միայն 1994թ.: Եթե 1993թ. ՀՆԱ-ի աճի տեմպը 1990թ. համեմատ կազմել է ընդամենը 46.8%, ապա 1994-98թթ. ընթացքում այն կազմել է 131.7%:

Հայաստանի Հանրապետության համախառն ներքին արդյունքի ծավալը 1998թ. 1997թ. համեմատությամբ աճել է 7.2 %-ով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը 1998թ. 1997թ. համեմատությամբ նվազել է 2.5 %-ով, իսկ սպառողական ապրանքների արտադրությունն աճել է 2.6 %-ով:

Հանրապետության գյուղատնտեսությունը բնութագրվում է որպես փոքր չափերի (միջին հաշվով 1.4 հա հողատեսքով և 6-8 տեսակի արտադրանք թողարկող), հիմնականում անհատական գյուղացիական տնտեսությունների հիման վրա ձևավորված ՀՀ տնտեսության ներկայումս ամենախոշոր՝ ՀՆԱ-ի ավելի քան 1/3-ն ապահովող ոլորտ, որտեղ զբաղված են հանրապետության աշխատանքային ռեսուրսների 41%-ը և որի արտադրանքի մոտ 67%-ն ուղղվում է սեփական կարիքների բավարարմանը:

Արտաքին առևտրաշրջանառությունը 1998թ. կազմել է 1119.1 մլն. ԱՄՆ դոլար և 1997թ. համեմատությամբ նվազել 1.5 %-ով, այդ թվում ապրանքների արտահանումը կազմել է 223.4 մլն ԱՄՆ դոլար և 1997 թ. համեմատությամբ նվազել 3.9 %-ով, իսկ ապրանքների ներմուծումը կազմել է 895.7 մլն. ԱՄՆ դոլար և նախորդ տարվա նկատմամբ աճել 0.4 %-ով:

Բնակչության դրամական եկամուտները 1998թ. 1997թ. համեմատությամբ աճել են 17.3%-ով, իսկ դրամական ծախսերը՝ 15.6 %-ով: Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը նույն ժամանակաշրջանում աճել է 6.1 %-ով, իսկ բնակչությանը մատուցված ծառայությունները՝ 8.5%-ով:

Հանրապետությունում իրականացված կապիտալ շինարարության ծավալը 1998թ. 1997թ. համեմատությամբ աճել է 17.5%-ով: Շահագործման հանձնված բնակելի տների ընդհանուր տարածքը նույն ժամանակահատվածում ավելացել է գրեթե 2 անգամ:

Սպառողական գների ինդեքսը 1998թ. 1997թ. համեմատությամբ աճել է 8.7 %-ով:

ՆԱԽԱԳՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ: 1998թ. Հայաստանում գործել են 851 նախադպրոցական հիմնարկներ (1997թ. համեմատությամբ դրանց քանակը նվազել է 9.8 %-ով), որոնցից 449-ը մանկապարտեզներ են (նախորդ տարվա համեմատությամբ քանակն ավելացել է 2.5%-ով՝ ի հաշիվ

մսուրների և մսուր-մանկապարտեզների վերակազմավորման), 383-ը՝ մսուր-մանկապարտեզներ (նվազել է 24%-ով) և 8-ը՝ դպրոց-մանկապարտեզներ (ավելացել է 7-ով): Նախադպրոցական հիմնարկներ հաճախել են 56604 երեխա (1997թ. համեմատ մանկապարտեզ հաճախող երեխաների թվաքանակը նվազել է 15.8 %-ով):

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՅՆԵՐ: 1998թ. գործել են 1407 ցերեկային ուսուցմամբ հանրակրթական դպրոց, որոնցից 861-ը (61.2 %-ը)՝ գյուղերում: Դպրոցներում սովորել են 596.6 հազ. աշակերտ կամ 0.8 %-ով ավելի, քան 1997թ.: Դպրոցների 86.6%-ը միջնակարգ է, 12.3%-ը՝ ոչ լրիվ միջնակարգ և 1.1 տոկոսը՝ տարրական: 1998թ. գործել են 29 դպրոց հատուկ ռեժիմի, ֆիզիկական և մտավոր արատ ունեցող երեխաների համար, 30 վարժարան, 1 ճեմարան և 4 ակադեմիական դպրոց:

1998թ. հանրապետությունում գործել են 26 մասնավոր հանրակրթական դպրոցներ՝ 1586 աշակերտով:

ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ: 1998թ. գործել են 16 պետական բարձրագույն ուսումնական հաստատություն, որոնցում ուսանել են 38.5 հազ. ուսանող կամ 1997թ. համեմատությամբ նրանց թվաքանակն ավելացել է 6.9%-ով: Ուսանողների 26.1%-ն ուսանում են մանկավարժություն, 25.1%-ը՝ հումանիտար գիտություններ, 12.8%-ը՝ ինժեներական մասնագիտություն, 9.8 %-ը՝ գյուղատնտեսություն, 9.3 %-ը՝ տնտեսագիտություն և այլն:

Հանրապետության 84 ոչ պետական ուսումնական հաստատություններում ուսանում են 21.2 հազ. ուսանող:

ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱ: 1998թ. ասպիրանտուրա են ընդունվել 319 մարդ (պետական պատվերով՝ 278), որոնցից 10-ը՝ արտասահմանցիներ և ավարտել 285-ը, որոնցից 30-ը՝ թեկնածուական թեզի պաշտպանությամբ, 56-ը՝ ներկայացվել են թեկնածուական թեզի պաշտպանության:

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ: 1998թ. գիտատեխնիկական աշխատանքներ իրականացնող 97 (վիճակագրական հաշվետվություն ներկայացնող) կազմակերպություններում աշխատել են 6397 մասնագետ-հետազոտողներ, որոնցից 513-ը դոկտորներ և 2099-ը թեկնածուներ են:

ԳՐՔԵՐ, ԲՐՈՇՅՈՒՐՆԵՐ, ԹԵՐԹԵՐ: 1998թ. Հայաստանում լույս են տեսել 126 անուն թերթեր, որոնցից 105-ը՝ հայերեն, 19-ը՝ ռուսերեն, 1-ը՝ անգլերեն և 1-ը՝ եզդիերեն: Բոլոր թերթերի ընդհանուր տպաքանակը 1997թ. համեմատությամբ ավելացել է 33.2 %-ով և կազմել 12.9 մլն. ընդհանուր տպաքանակ:

1998թ. հրատարակվել են 535 անուն գրքեր և բրոշյուրներ՝ 391.9 հազ.օրինակ ընդհանուր տպաքանակով, այդ թվում 7 դպրոցական դասագրքեր և 22 անուն մանկական գրականություն:

ՄՇԱԿՈՒՅԹ: 1998թ. հանրապետությունում գործել են 21 պետական համերգային կազմակերպություններ: Կազմակերպվել են 579 համերգային ներկայացումներ (68-ով ավել, քան 1997թ.), որոնցից 245-ը՝ բարեգործական, տոնական-հրապարակային (այդ թվում՝ երկրաշարժի և արցախյան շարժման 10-ամյակներին նվիրված):

Հանրապետությունում 1998թ. գործել են 21 թատերահանդիսային կազմակերպություններ, որոնցից 5-ը՝ երաժշտական, 12-ը՝ դրամատիկական և 4-ը՝ մանկական ու պատանի հանդիսատեսի: Պատրաստվել և ներկայացվել են 48 նոր և 6 նորացված (1997թ. համապատասխանաբար՝ 54 և 1) ներկայացումներ: